

ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱՆ

Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆԻ ՔԱՐՈՉՐ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ (1 հունիսի 2003 թ.)

*«Ահնդ գոջմամբ ուռն ի ձեռին
Իջեալ յերկնից Միածին Որդին,
Տեսանելով արթուն ասուն
Նայասրանեայց սուրբ Լուսաորչին»:
(Պաղտասար Դպիր)*

Ոսկե ուռնակի քրիստոնեակոչ գարկն ու 1700-ամյա Միածնաէջ այս փաճարի կոջնակն է ամենքիս ի մի բերել այստեղ՝ մեկ անգամ ևս ծնրադրելու Իջման Սուրբ Սեղանի առջև և մեր աղոթքի ձայնն ընդելուզելու աղոթահյուս այս կամարներին: Այսօր Աստծո կանչով միակամ եկել ենք նորեն նորոգելու մեր ուխտը, մեկ անգամ ևս հավաստելու ի Քրիստոս մեր կանդաղուն դաշինքը:

Մենք ուխտի ժողովուրդ ենք: Ուխտագնացությունը մեր ազգային նկարագրի անկապելի մասն է: Մեր պապերն ուխտի են ելել ամբողջական բնակավայրերով, գյուղերով, ընտանիքներով, մեծ ու փոքրով: Նայոց աշխարհի մեր փափկասուն քիկնայք, որ հաճապագ բոկոսն քայլում էին աղոթքի փնթի արահետներով, ուխտի գաղափարով էին դաստիարակում իրենց զավակներին: Եվ մանավանդ հոգնաբաստիկ էին նրանք, ովքեր հեփիոսն ուխտի էին գնում Աստվածորդու լույս գերեզմանին:

«Ուխտն, որ զուխն է եկեղեցույ, ընդիրք և պիտանիք լինիցին. ևս առաւել ժողովուրդն»,- ասել է մեր հավաքքի վեհագույն Նայրապետներից Սահակ Պարթևը: Այո՛, միայն ուխտավոր ժողովուրդն իրավամբ կարող է ընդիրք և պիտանի լինել և արարել լուսն այսպիսի փաճար, որին 1700 փարի ուղղված են մեր հավատավոր ու վճռական հայացքները:

Ազաթանգեղոսը վկայում է, որ այս փաճարը կառուցելու համար Տրդատ արքան յոթնօրյա ճանապարհ գնաց Մասիսն ի վեր և այնտեղից թիկնամբարձ բերեց կարծր, անկոփ, երկայն, հասար ու մեծամեծ քարեր: Նայոց առաջին քրիստոնյա գահակալը ոսկի խարսխի վրա գործվող հրեղեն սյան փեղում կառուցեց փաճարն այս ու կանգնեցրեց փրկչական խաչը՝ ի երկրպագություն արժանավոր հերոսորդների: Եկեք, ուրեմն, ասենք միակամ. **«Ուրախ լեր, Սո՛ւրբ եկեղեցի...»:**

Նաև այսպես էր, այս վայրից ոչ շար հեռու՝ Ռահ գետի ափին, Սուրբ Մեսրոպյան իր ժողովրդին հանձնեց հավերժության բանալին, և երկու հասարակույն այոսներ՝ քրիստոնեություն և քրիստոնեական գիր, դարձան մեր անշեղ երթի ռահաճորդները:

Այս տաճարի առինքնող գործության մասին է խոսում նաև Առաքել Դավրիժեցին:

Իսպառիստում հայերի մեջ ծաղկալ շրջող Շահ-Աբասն իմանում է այն անբակարելի կապի մասին, որով րեղահանվածներն աներևութապես կապված էին հայկյան հողին: Ձգողը ոչ միայն նախնիների գերեզմաններն ու վանքերն էին, ուխտարեղիներն ու սրբերի դամբարանները, այլև մանավանդ Ս. Էջմիածնի նշանավոր Աթոռը՝ Գրիգոր Լուսավորչի մյուռոնաբույր Սուրբ աջով: Խորագետ շահը որոշում է Պարսկաստան բերել տալ Գրիգոր Լուսավորչի աջը և այնպես կառուցել տալ մի կողմ Էջմիածին՝ կաթողիկոսանիստով ու մյուռոնոփնությանը: Շահ-Աբասը վստահ էր, որ միայն այդ կերպ հայերը կհաստատվեն Իսպահանում, քանզի «Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգս հայոց կապեալ կայ»:


Սակայն շահի նկրտումներն ի դերն ելան, որովհետև միայն «Արարապետան գաւառէն թղխեսցին հայոց շնորհք պարտիրաւացն Աստուծոյ»: Այո՛, մեր տարագիր ժողովրդի նման հայոց Կաթողիկոսական Աթոռը և աստանդական եղավ, սակայն մնաց Տաճարն այս որպես Հայրապետական գահի հաստատությունն ու անշարժության վայր: Միածնաէջ այս սրբավայրն անփոխարինելի է հայ ժողովրդի համար, քանի որ միայն այստեղ «Քրիստոս հաստատեց տուն աղօթից ամենայն հաւատացելոց և Աթոռ քահանայապետութեան» (Ազաթանգեղոս):

Հիրավի, հայոց ազգի հոգևոր պարավարն այս տաճարն է, Իջման այս Սուրբ Մեղանը և, ինչպես Արշակ Չոպանյանն է ասում, այն բարոյական Արարապ է՝ նրա նման ալևոր, վեհափառ ու երկնաբարձ: Որպես Արարապ՝ լուսաճորդ խորանով տաճարն այս մեր պարամության կենդանի վկան է: Եվ, ինչպես Գարեգին Հովսեփյանն է ասում, որպես գթառատ մայր՝ այն մխիթարության ու սփոփանքի աղբյուրներ է հոսեցրել մեր սրբերի մեջ, եղել հոգևոր դաստիարակության մայր, որից բխել են Ավետարանի լուսո ճառագայթները՝ լուսավորելով հայության սրբի խորքերը: Եվ մշտապես հայի հոգևոր և մտավոր շարժման արդյունքները Լուսո Խորանի աղբյուրներից են բխել:

Այսօր ևս այս սրբարանից պիտի սկիզբ առնի մեր հոգևոր, կրոնական կյանքի ուժգին հոսանքը, քանզի այստեղ է հաստատված Լուսավորչի՝ Հայաստանյայց վերածնության Հոր սուրբ գավազանը, որ նրա հոգին միշտ ի փրկություն է հովվել: Այս ուխտով մենք պիտի նոր շունչ ու ոգի հաղորդենք մեր հավաքքի հոր աստվածաշնորհ գործությանը՝ քրիստոնեությանը: Այս պահին ևս մեր մեջ լսելի է մշտականդան հրավերը. «Եկայք շինեսցուք սուրբ գևորանն լուսոյ»:

Ի՞նչ ոգով ենք այսօր մենք ելել ուխտի, հանձնակապա՞ր ենք մեր հավաքքի մոմի լույսը միախառնելու Սուրբ Խորանի լույսին, նվիրումով, համարել գործունեությամբ կարո՞ղ ենք շենացնել ու բարեգարդել հայության երագների ու կարտների բնօրրան երկիրը մեր:

Հարկավ, այո՛: Քանի որ մեզ այստեղ բերել է մեր ուխտադիր նախնիներից ժառանգված հայրենասիրության ու եկեղեցասիրության ոգին: Այս պահին ամենքս նորացված հավաքքով ավելացրինք սրբերի արցունքներից մակարդված Լուսավորչի կանթեղի յուղը, նորեն մկրտվեցինք Լուսավորչյան լույսով, մեր հոգիներում վառեցինք փրկչական ջահը: Այս



պահին ամեն մեկս ուխտի մեր սպասումն ունենք: Աստված ի կարար անի ուխտն ամեն-
քիս, իրականացնի բոլորիս երազները, համակի բարի մղումներով: Ապրենք նոր ձգարմուն-
քով, որպեսզի Աստծո լուսեղ փաճարի մեջ յուղասպառ կանթեղ չդառնանք, ինչպես կասեր
Մուշեղ Իշխանը, որպեսզի մեր հոգին չդառնա հին բույն, որտեղ ոչ մի թռչուն զարուն չի բե-
րում: Ուրեմն այս ուխտով թող գարնանանա մեր կյանքը, թող բորբոքվի մեր հոգու կան-
թեղն աստվածային սիրով առնեցուն:

Ուխտի մեր օրը մեր երեխաների օրհնության օրն է: Բյուր օրհնություններ մեր մանուկ-
ներին, որոնց երազների իրականացնողներն ենք մենք: Մեր քրտինքով ծաղկյալ հողի վրա
թող նրանց բայլքը հաստատուն լինի, որպեսզի դառնան մեր վաղվա ուխտի շարունակող-
ները և Զրիստոսի հավատարմիկները:

Ընդունելի լինի ուխտդ, ուխտավոր հայորդի:

Լուսավորչի կանթեղն անշեջ կլինի,

Քանզի վառող Աջն է մեզ միշտ հովանի:

(Հովհաննես Հովհաննիսյան)